

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/2

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի 16.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշման դեմ:

Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի գանգատում բերված փաստարկները.

04.02.2016թ-ին Ա/Ձ Ռազմիկ Մինասյանը ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշումը, որի համաձայն իր չկատարված հարկային պարտավորությունները, առանց Կապանի ՏՀՏ 05.05.2015թ-ի թիվ 74 վարչական որոշման մեջ ներառված պարտավորությունների կազմում է 532.4 հազ. դրամ, որից շրջանառության հարկ 199.6 հազ. դրամ և եկամտային հարկ 332.8 հազ. դրամ: Շրջանառության հարկի պարտավորություններն առաջացել են 2015թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկներով, իսկ եկամտային հարկի մասով՝ 2015թ-ի ապրիլից-դեկտեմբեր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի ամփոփ հաշվարկների և նույն ժամանակահատվածի եկամտային հարկի նվազագույն վճարների արդյունքներով:

Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի կողմից կատարվել են վերոգրյալ հարկային պարտավորությունների (մինչև 27.01.2016թ. ներառյալ) գծով հաշվարկներ:

Ըստ Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի կողմից կատարված հաշվարկների, շրջանառության հարկի գծով պարտավորությունը կազմում է ընդամենը 83.512 դրամ, այդ թվում՝ ապառք 73.267 դրամ, տույժ 10.245 դրամ: Այսինքն, 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշմամբ ավել է գանձման առաջադրվել 116.1 հազ. դրամ (199.6-83.5):

Եկամտային հարկի գծով պարտավորությունը 27.01.2016թ-ի դրությամբ կազմում է ընդամենը 236.065 դրամ, հետևապես 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշմամբ ավել է գանձման առաջադրվել 96.7 հազ. դրամ (332.8-236.1):

Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի կատարված վերոգրյալ հաշվարկի արդյունքում ստացվում է, որ 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշմամբ ավել է գանձման առաջադրվել ընդամենը 212.8 հազ. դրամ:

Ա/Ձ Ռազմիկ Մինասյանը նշում է նաև, որ 30.07.2014թ-ին կատարել է 72.000 դրամի շրջանառության հարկի մասով վճարում, որն առ այսօր չի հաշվառված և չի հանված հարկային պարտավորություններից: Նշված գումարը հարկային տեսչությունը համարում է գերավճար արտոնագրային վճարի մասով, չի կատարում հաշվանցում և այդ գումարի մասով 2014թ-ի հուլիսի 20-ից հաշվարկվում են տույժեր:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ռազմիկ Մինասյանը խնդրում է կատարել պարտավորությունների վերահաշվարկ և ներկայացնել գանձման վերաբերյալ ճիշտ որոշում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել

է, որ 27.01.2016թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները, առանց Կապանի ՏՏՏ 05.05.2015թ-ի թիվ 74 վարչական որոշման մեջ ներառված պարտավորությունների, կազմում են 532.4 հազ. դրամ, որից շրջանառության հարկ 199.6 հազ. դրամ, եկամտային հարկ 332.8 հազ. դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.01.2016թ-ին ընդունվել է թիվ 30-11 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Ռազմիկ Մինասյանից 532.4 հազ. դրամ դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ 2016թ. հունվարի 27-ի դրությամբ Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի հարկային պարտավորությունը կազմել է 917.4 հազ. դրամ, որից շրջանառության հարկի գծով՝ 400.6 հազ. դրամ (ապառք 171.7 հազ. դրամ, տույժ 228.9 հազ. դրամ), եկամտային հարկի գծով՝ 516.8 հազ. դրամ (ապառք 200.5 հազ. դրամ, տույժ 316.2 հազ. դրամ):

ՀՀ ՖՆ Կապանի ՏՏՏ-ի կողմից 2015թ. մայիսի 5-ին կայացվել է թիվ 74 որոշումը ԱՁ Ռազմիկ Մինասյանից 1232.4 հազ. դրամ ժամանակին չվճարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ: Պարտավորությունը ներառել է շրջանառության հարկ 541.4 հազ. դրամ (ապառք 438.8 հազ. դրամ, տույժ 102.6 հազ. դրամ), եկամտային հարկ 691.0 հազ. դրամ (ապառք՝ 507.6 հազ. դրամ, տույժ՝ 183.4 հազ. դրամ):

Կապանի ՏՏՏ-ի 05.05.2015թ. թիվ 74 որոշմամբ գանձման առաջադրված գումարներից ԱՁ Ռազմիկ Մինասյանի կողմից վճարվել է 340.280 դրամ շրջանառության հարկ և 507.000 դրամ եկամտային հարկ: Արդյունքում, չվճարված պարտավորության մնացորդը կազմել է 385.000 դրամ, այդ թվում՝ շրջանառության հարկ 201.000 դրամ (ապառք՝ 98.400 դրամ, տույժ 102.600 դրամ), եկամտային հարկ 184.000 դրամ (ապառք՝ 600 դրամ, տույժ 183.400 դրամ):

Ինչ վերաբերվում է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությանը, ապա 27.01.2016թ-ի դրությամբ Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի չկատարված հարկային պարտավորությունները, առանց Կապանի ՏՏՏ 05.05.2015թ-ի թիվ 74 որոշման մեջ ներառված պարտավորությունների, կազմել են 532.4 հազ. դրամ, որից շրջանառության հարկ 199.6 հազ. դրամ, եկամտային հարկ 332.8 հազ. դրամ: Մասնավորապես, շրջանառության հարկի պարտավորությունն առաջացել է 2015թ-ի 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկներում արտացոլված պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 73.267 դրամ, սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Հարկ է նշել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողները շրջանառության հարկի գումարը պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող առաջին ամսվա 20-ը:

Եկամտային հարկի պարտավորությունն առաջացել է 2015թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի ամփոփ հաշվարկներում արտացոլված պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 154.917 դրամ, և 2015թ. ապրիլից-դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի նվազագույն վճարների գծով պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 199.917 դրամ, սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անհատ ձեռնարկատերը եկամտային հարկը հաշվարկում և վճարում

է ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ): Նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի կողմից տույժերը հաշվարկելիս հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Կապանի ՏՀՏ 05.05.2015թ. թիվ 74 որոշմամբ գանձման առաջադրված և չվճարված պարտավորությունների նկատմամբ նույնպես հաշվարկվել են տույժեր (մինչև 365 օր), որոնք ներառվել են ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշման մեջ:

Բացի այդ, Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի կողմից շրջանառության հարկի գծով պարտավորությունները հաշվարկելիս հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ մինչև 2015թ-ի 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկի գրանցումը՝ 20.07.2015թ., շրջանառության հարկի գծով նրա պարտավորությունները կազմել են ընդամենը 591.442 դրամ, այդ թվում՝ ապառք 438.768 դրամ, տույժ 152.674 դրամ:

Ինչ վերաբերվում է Ա/Ձ Ռազմիկ Մինասյանի կողմից հանրային սննդի ոլորտում արտոնագրային վճարի հաշվարկային հաշվին 31.07.2014թ-ին վճարված 72.000 դրամն այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելուն, ապա հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 1-ին Հավելվածով հաստատված հարկերի հաշվանցման և (կամ) վերադարձման կարգի 1.2 կետի համաձայն՝ հաշվանցվում և (կամ) հարկ վճարողին վերադարձվում են հարկային մարմինների միջոցով պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակների և հարկային այլ տուգանքների մասով պետական բյուջե վճարած այն գումարները, որոնց հաշվանցումը և (կամ) վերադարձը նախատեսված է օրենքով:

Տվյալ դեպքում արտոնագրային վճարի վերադարձը կամ հաշվանցումը օրենքով նախատեսված չէ: Մասնավորապես, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 15-րդ կետի համաձայն՝ ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում սույն հավելվածով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում և չեն վերադարձվում (անկախ նրանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը):

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները հաշվարկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հիմնավոր են և ենթակա են կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016թ-ի թիվ 30-11 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմիններին միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ